

» ի Լերուներն. և ինքն տար է և չոր է, և իր անունն Թ. Խաչալ ասեն: Ով որ  
» յամէն վաղվրնէ մինչև տասնուհինգ օր ամէն օր զատր հունդն երկու մթխալ  
» ուսէ և Տատալի ջուր իմէ ի վերայ, հալէ զան քարն որ երիկամն լինայ »:

Այս բոյսս բուսարանից տարակուսի և վիճի առիթ եղած էր, հիմայ հաւանին  
թէ ըլլայ կոշուածն Bunium Bulboocastanum. Փ. Noix de terre, որ նշանակէ  
դեռնի Բնկոյզ, Ամիրտովաթայ ստորագրածին ալ յարմար: Պէշթար ուրիշ շատ  
անուններ ալ յիշէ Աբարայ՝ Ասորոց և Ալորիկէի պլուսայ կողմանց մէջ լը-  
սուած: — Հաւանօրէն այս է և Հ. Գետնիպրտող և Գետնի աղիք կոշուածն, այլ  
և Երկրմայր, զորս տես ի կարգին:

## ԸՆԴ ՀԱՅԱՍՏԱՆ ՌՈՒՍԻՈՑ

(Տես յ'էջ 462)

### ԺԲ

Մեկնումն ի Կիրոսու: — Ագստ և Գարտաշ կիրճը: — Ակնարկ մը  
Կիրոսսի հովտին հրաշալի տեսարանին վրայ: — Թափառասկան ցեղե-  
րոս խմբովին լուս ի շերիկն: — Ֆար-ալի շափարը:

Մայիս 21. Պայծառ արեգական ճառագայթք մեր վրանէն ներս մտնե-  
լով, կը հրաւիրէ զմեզ օդոյն գեղեցկութենէն օգտուելով՝ ճամբայ ելլել-  
և մինչ ծառայք վրաններն կը ծալլեն և բեռները կը կապեն, վրայ կը  
հասնին բազմաթիւ հիւանդք, և ամուսինս բժիշկ կարծելով՝ իրեն խորհուրդ  
կը հարցընեն: Իսկ երբ ամենայն կազմ է ու պատրաստ, և կարաւանը  
արդէն ճամբայ ելած, կ'աշտանակենք յերիվար, երկու ձիաւոր մեզի առաջ-  
նորդ ունենալով որ մեզի պիտի առաջնորդեն այնպիսի ուղեաց մէջ որ յա-  
ճախ հեղեղատից անկողինը են: Շարք մը գերեզմանական հողաբլուրներէ  
անցնելէն ետքը որ 1600 մետր բարձրութիւն ունին ծովուն երեսէն, կա-  
րաւանը կանկ կ'առնու ի ձորն Քարաշէնի, որոյ վտակաց ջուրք կրային են:  
Ծառք սակաւաթիւ, կաղամախիք կը սկսին երևնալ:

Հրաբխային յեղափոխութեամբ ձևացած հողոց ընդարձակութեան մէջ  
կը բշխին ընտիր ակունք ջրոց, յորոց և գետն Ագստ, որոյ հովիտը կը մըտ-  
նեմք: Խիստ աղէկ կերպով մշակուած և բազմարգասանդ է այս հովիտ. ար-  
մտիք, թթենիք, ուռենիք և դեղձենի հսն կ'աճին ու կը պտղաբերեն ստա-  
տաբար: 1710 մետր անդին, և ահա կը ժամանեմք ի Գարտաշ կիրճ, ուր  
կը տեսնենք տեղէն փոխապրուած հոյակապ ժայռի կտոր մը: Կիրճէն անդին կը

սկսի դժուարին էջը մը դէպ ի Կիրոս, որ իսկոյն աչուընուս կը ներկայանայ, միգի մը յանկարծ փարատելով, իբրու զիւթական տեսիլ մը: Աւէն կողմանէ կ'երևնան հրաբխային հողաքարէ ձևացած կոթողներ, որովք ծածկուած են լեռինքն: Մեր աչքին զիմաց սարածուած ձորահովտիս տեսարանն՝ բոլորովին լուսով ողողուած, մինչ զեռ մենք միգով շրջապատուած ենք, ամենագեղեցիկ և ամենահաճոյ է աչաց: Բայց հարկ է ձիբերէն վար իջնել. զի սահուն և դժուարին են ճանապարհք ժայռին վերայ. և բազմաշխատ են վայրէջքն: Որչափ կը յառաջենք, կը տեսնենք որ հողաքարիներն իրենց բացուածքն ունին, և անոնցմէ զուրս ելած ծուխն կ'իմացընէ թէ այդ տարօրինակ և նկարչական տեղուանք՝ բնակութիւնք են տեղացւոց:

Ահաւասիկ հին աւանն Կիրոսի, լեռան կպած, և խիտ համապատշաճ այն հոյակապ տեսարանին հետ: Ի խորս ձորահովտին կ'ընթանայ Կիրոսի—չայ, որուն միւս կողմ կը բարձրանայ նոր աւանն իր ճերմակ տուներով ու կարմիր կամ կանաչ տանօք, տգեղ արատ մը կազմելով՝ ուր արուեստահրաշ բնութիւնն ամենայն ինչ փափաքելի գեղով արտադրած է:

Օլը միշտ սպառնալից է. ուստի նախամեծար կը սեպենք բնակարան մը դռնել քան վրաննիս հաստատել լեռանց վրայ, որ յաճախ զարնանային այս եղանակին փոթորկայոյզք են: Ետի դէպ ի թղթատարութեան կայարանը կ'ուղղուինք, բայց կը տեսնենք որ արդէն լի է ճանապարհորդներով. անկէց դէպ ի կարաւանատունը կ'երթանք. բայց սենեկաց տեսիլը միայն և տեղւոյն զարշահուութիւնն կը փութացընեն զմեզ ի փախուստ: Վերջապէս պարոն Շահնազարեան կարապետի միջնորդութեամբ, որ զաւտին զանձապետն է, և որուն յանձնարարական մը ունէինք, կը յաջողինք տան մը մէջ երկու մեծ սենեակ վարձել, մին՝ մեզի համար, երկրորդն ալ հետերնիս եղող անձանց և բեռանց:

Մայիս 22. Եղանակնիս որչափ ալ յառաջացած է, զեռ ցուրտ է օլը և թաց: Ըսին մեզ թէ երեք տարիէ ի վեր անձրեւային են եղանակը, և որ բնակչաց մեծ հող և տրամութիւն կը պատճառէր հնձոց նուազութեան պատճառաւ:

Չանկիզօրի նահանգին վարչական գլխաւոր տեղին է Կիրոս կամ Կորիս ըստ Հայոց, 3142 բնակչօք, որոնք բոլոր հայազգի են: Գլխաւոր թաղը՝ սը կը բնակինք, երոպական օճով շինուած է, ինչպէս Շուշի քաղքին նոր թաղերը. նոյնպիսի քարակերտ տունք, վայրահակ տանօք, ձեռն առատ ըլլալուն, և արտաքին պատշգամօք ծածկուած, պատուհանք ալ ամբացած բանուած երկաթով. համառօտ ըսինք, չունենալով հետաքննութեան արժանաւոր բան մը բովանդակ աւանին մէջ: Մեծ հրապարակին վրայ՝ որ ծառազարդ ուղղոյ փառաւոր անունը կը կրէ, կ'անցնին ջրիք, էջը, սազք, հողթեր, և այլն. մէջ տեղը աղբւր մը կայ, հրապարակին երկայնութեամբ ալ երկու գետակք, և հոն է անասնոց վաճառատեղին, իսկ գետին միւս կողմը կը բարձրանայ անշուք զիւղը:

Քարկուշատի գետակ մ'է Եիրուսի—չայ, ընդ որ կ'անցնին կամ ընդ հուն տեղիս և կամ վրան ձգուած փայտէ կամրջով, Նկարապեղ տեսարան մ'է նկատել զանդազար անց ու դարձ կանանց՝ հողէ սափորով մը, ու երբեմն մանկիկ մը զրկերնին, և ձիաուորք իրենց ջրոյ ամաններով՝ այդ հիանալի գետակին ամբոխասաստ ջրոց մէջ, որ այլևայլ ընթացք կ'առնուն ու տեղ տեղ ջրվէժներ ձևացընելով՝ բազմաթիւ ջաղացքներ կը դարձընեն։ Ասոնց մէջ, որ միայն զոներնէն լոյս ընդունելով, սուսգապէս քարայրից ձև ունին, կը տեսնուի խոշոր կերպով ազացած ալեր թափուիլը։

Անդազար է երթեկէ լեռնականաց ի Եիրուս. ոմանց՝ իրենց զործոց համար քաղաք դալով, և այլոց՝ զարձիւ ի տուն իւրեանց և առ ընտանիս։ Էրիկ մարդիկ, կանայք, աղայք, ձիերու, ջրուոց, էշերու, զոմէշի վրայ հեծած, երբեմն երկու, իրեք անձինք մի և նոյն կենդանոյ վրայ, այր կին և որդի։ Հետիոտն եղողները միշտ մեծ զաւազան մը կը կրեն ձեռուընին. զլուխնին փափախ, և կոճկելով անձուկ պարեգօսնին՝ եղանակին ցրտութեանէն պահպանուելու համար։ Գիւրակեցիկք՝ սուտընին կօշիկ ունին. իսկ չքաւորք՝ զամերով հաստաստուն սանդալներ ու բրդեայ պատմուճան կամ վերարկու մը։

Գրեթէ ժամէն վայրկեան անակնկալ ու հանոյատեօիլ տեսարանք հանդիպին աչքիդ։ Խոխոյուն ջուր մը որ կ'ոռագանէ զովագին պարտէզներ. նկարագեղ խարիտուլ անակ մը՝ աստիճաններով յարկ յարկ բաժնուած, ու լերանց կողիցը մէջ փորուած, տափարակ տանեօք, ու ժողովուած զումարուած են կանայք՝ վաւարանաց չորս կողմը, որոց բերանը յաճախ հողէ տակը բաց սափոր մը զրուած է, մուխը անցնելու համար։ Բայց նշանակութեան արժանաւոր՝ հողաքարանց մէջ փորուած բնակարանքն են. երբ Շահարատ այս կողմերն արշաւեց, այս բնական բերդերուն մէջ պատսպարուեցան բնակիչք։

Հին աւանին վերի մասին մէջ՝ գեղեցիկ կնձնի ծառերով հովանաւորուած աղբիւր մը կայ։ Կը զրուցեն թէ հոն թաթար մը իր քրոջը հետ քրիստոնէութիւնն ընդունած ըլլայ. որով այն աղբիւրը մեծ հուշակ ունեցեր է յերկրին, և շատ կանայք ուխտի կը դիմեն ու ջրէն արգասաւորութիւն կը խնդրեն։ Հայ ժողովրդեան հոս ունեցած մասնաւորութիւնն է որ բազմաթիւք կապոյտ աշուիք են, տիպարքն խոշոր և անգեղեայ, և որ հետեւանք կրնայ համարուիլ տիրող աղքատութեան և կիւմայի խտութեան։

Երկրախօսական կազմութիւն հողոյն՝ մեծապէս հետաքննական է. վաճառքն աննշան, և միայն տեղական սպառման նիւթեր. մեք ալ շատ պաշար առինք հետերնիս, որովհետև աստի մինչ ի Տաթեւ և Կատար՝ կատարելապէս վայրենի կրնայ համարուիլ, չունենալով ոչ կարգաւորեալ ճանապարհ և ոչ իսկ չափարաց կայան։

Մայիս 24. Շրջապայութեան կ'ելենք երկրին չորս կողմերը։ Երեսի վրայ ձգուած հայկական հին գերեզմանատեղիք կը տեսնուին, ուր ամուսինս կ'ուզէ պեղումներ ընել. ուստի հետերնիս առնլով զպարոն Կարապետ Շահնազարեան, Եիրուսի—չայի ընթացքով զէպ ի դաշտերն կը յառաջենք, ուր

ծոխ արօտասեղեաց մէջ կ'արածին երիվարաց փառաւոր խումբք : Առաւօտը ջերմագին է . թէպէտ և ձեան մեծ շեղակոյտք կը նկատենք մեզմէ քանի մի մեզը վեր : Քիչ վերջը կ'իջնենք փառահեղ մենաստանի մը աւերակաց առջև , Անւոյ շինութեանց համաձև , և որոց ժամանակակից է անշուշտ : Կը ստիպուինք ըրած ճամբաներնէս քիչ մը ետ դառնալ՝ հին ու շատ գարբրու գիւղի մը գերեզմանավայրն տեսնելու , որոյ բնակչաց համար կ'աւանդեն թէ հիմակուան կիրուս աւանին հիմնարկողքն ըլլան :

Հագիւ թէ կը սկսինք անհարթ ու տղմոտ ճանապարհաւ մը վար իջնել , և ահա խափանուած կը գտնենք թափառական գերդաստանաց բազմութեանն , որ իրենց անթիւ նախիրները արածելու կը տանին : Քանի մը վայրկեանն այս ահագին ծովուն մէջ ենք , կենդանեաց և մարդկանց , և կը բռնազատուինք խիստ յամբարայլ յառաջել : Ո՛րչափ գեղեցիկ է տեսարանս և լի կենդանութեամբ և զունով , քան զոր աւելի անմարթ է երևակայել , բազմաթիւ հովուաց միաբան գաղթականութեան մը : Անկարելի է ինչ նկարագրել ոչխարաց , կովուց , ուղտուց անթիւ բազմութիւնը , որ իրարու կը յաշորգին առանց ընդհատութեան ու գրեթէ իւրաքմէ անբաժան : Հնոտներ հագած կանայք և մանկուներ , ոմանք կենդանեաց վրայ , այլք հետի՝ էրիկ մարդոց հետ կը հսկեն վրանին , իրենց ահագին շուներով ուզղելով հագարաւար կենդանեաց այս շուն : Բազմագունեան թիթեղները աւելի պայծառ կը փայլեն արեգական լուսով . ու փրին չէ մեզ այդ հոծ բազմութեան մէջ ճամբայ բանալ . բայց մեծագոյն զժուարութիւնն է երբ գետին քով հասնելով՝ հունը ծածկուած կը գտնենք նախիրներով , որք առիթէն օգտուելով ոմանք զբազած են ջուր խմելով , այլք ալ ու ձախ օստոտելով , ու կը լուին ուղտուց վրայ նստող կանանց սուր ձայներ՝ զանոնք յառաջ վարելու . ոմանք ալ եզանց վրայէն վար իջնելով՝ քարանց ու գաւազաններու հարուածներով կ'օգնեն . վերջապէս այս աննկարագրելի խառնաշփոթութեան մէջ կը յաջողի մեզ գետին ջրայն մէջ մտնել , ու յառաջել ջրոց կաթիլներու անձրեւուն միջէն , զոր այդ բազմութեան գնացք կը պատճառէ , ու կը հասնինք միւս ափունքը : Յետոյ կը շարունակէ գերազանցապէս այս հովուական չուս : Վրաններն , կապերտք և խուրճիք ուլտուց վրայ բեռնաւորուած են . եզանց վրայ եղեգներ՝ որ իրենց բնակութեան շինութեան պիտի գործածուին , երկայն երկայն խուրճեր՝ զայն կրողներուն գլխէն վեր բարձրանալով և միւս կողմանէ գետինը աւելելով : Եզանց մեծութիւնը , իրենց հանդարտ գնացքն , գլխորուն տարօրինակ պատկը , կը զարմացընեն զիս : Հորթուկներ , քուռակք , նորածին կամ հիւանդ ոչխարք՝ հեծնելու կենդանեաց վզէն կախուած են . զի ոչ ծընունդ և ոչ մահ կենդանեաց կամ տղայոց՝ չընդհատեր թափառականաց շուն : Իրենց գլխաւոր հոգն ու մտածութիւնը՝ այդ նախիրներուն հարկաւոր արօտը գտնելն է : . .

Որ ուրեմն կը հասնինք ի գերեզմանավայրն , ուր Պ . Շանտը կը փափաքի պեղումներ գործել : 1520 մետր բարձրութիւն ունի , փոքր սարահարթի մը

վրայ, որոյ առջեւէն կը վազէ գետն : Ի հանդիպոյ կը տեսնուի ձիւնապատ կոյտն Կէօք—չայ, ու խիստ հողմ մը կը փչէ : Փանի մը քանկ հուարելէն ետքը, ու գետոյն այլ և այլ շրջաններն ընելով կը դառնանք ի Կիրուս, ուր լուսազրութեան հանդերձանք ձեռուրնիս՝ զանազան տեղեաց կ'այցելենք, ու իրիկուան դէմ կը դառնանք ի սուն : Մեծ հրապարակը՝ հոն գիշերելու եկող թափառական ընտանեաց բազմութեամբ լեցուած է . բայց օթեւաննին պիտի յերկարի անշուշտ . զի յոգնած դաղրած՝ հազիւ սիրտ մնացած է վրանին իրենց կերակուրը պատրաստելու : Ոմանք ընկողմանած կապերտից ու վերմակներու վրայ, այլք վառուած մեծ կրակներու շորս կողմ բոլորուած, իրենց յոգնած և ցաւազին անձինքը զարմանելու հետ են, ոտից վէրքերը կը պատեն, կամ կրակի շերմութեամբ թմրած կը նիրհեն : Մթոյն մէջ կ'երևնան ուղտուց երկայն վզերը, ու իրենց ախուր մնամալուն հետ կը խառնուին անօթի կամ հիւանդ սղպոց ձայներ : Ո՛րչափ նիւթք արուեստագիտի մը, և քանի՛ անգոր է գրիչս նկարագրելու այսպիսի տեսարաններ, որ միանպամայն կը բովանդակեն զպարզութիւն և զմեծութիւն, և այնչափ գորովալիք են :

Վաղը, երբ արշալոյսն ծագէ հորիզոնին վրայ, ամէնքն ոտքի վրայ պիտի ըլլան չուելու դէպի այն խոտացեալ երկիր, ուր ճիւղութիւն է արօսոյ և աւատութիւն չրոյ :

Մայիս 25. Կիրուսի նաչաչնիկն եկաւ զմեզ տեսնելու : Խօխտ սերալիբ կերպ ունեցող Ռուս մ'է, դիւրապատրաստ ի ծառայութիւն, որ պիտի դիւրացնէ մեր ուղեւորութիւնը մինչ ի Կատար՝ գեղերու պլխաւորներուն ուղղուած տեսակ մը անցագիր տալով ձեռուրնիս ի ռուս, հայ և թաթար լեզուս : Երկու անձինք ալ տուաւ առաջնորդ, յորոց մին Ղէզկի է միւսն թաթար. այս վերջինը, Ֆաթ—ալի, հետերնիս պիտի գայ մինչև յՈրգոտպատ, վարժ օւ փորձուած անձ մը, որուն նաչաչնիկ զիս մասնաւոր կերպով կը յանձնարարէ : Կ'երևնայ թէ դժուարագնաց պիտի ըլլայ ճանապարհն ընդ որ կը յառաջենք : Հանքալատ, անտառային է Չանկիզօր, բայց ուղիք և ճանապարհք այնչափ լաւ անուն մը չունին :

Առաջնորդի մը հարկաւոր խնդիրը լմընցընելով, նախաճաշի կ'երթանք առ Շահնազարովի : Կը հրամցընեն ազգային կերակուր մը՝ որ կիրակի օրեր ամէն Հայու սեղանոյն վրայ կը գտնուի. Կօյօչակ կը կոչեն զայն, ոչխարի միս շարդուած և խառն ընդ բրնձոյ և ուրիշ քանի մի համեմից, զորս անկանի մը մէջ ծեծելով ու զնտակի նման ոլորելով կը խաշեն, և թարմ կարագով կ'ուտեն : Պատրաստութիւնը մեծ է, և տանը մէջ գտնուողք գրեթէ իրենց մասն օւնին այլ աշխատանքին մէջ : Միտք ունիմ՝ հետս ի Գաղղիա տանել Հայոց այնչափ սիրելի կերակորոյն շինելու եղանակը կամ նուսխայն :

Մայիս 26. Առաւօտեան եօթներորդ ժամուն կը մեկնիմք ի Գարա—քի—լիսէ : Օզը գեղեցիկ է . կարաւանը ուղղորդ կ'ելլէ ընդ լեռան՝ որ նոր թաղին ետևը կ'իյնայ : Թափառականաց բազմութիւն ընտանիք մեզի հետ նոյն ճամբ

բէն կ'երթան : վերելքը զժուարճանաց է . բայց որչափ կը բարձրանանք՝ այնչափ աւելի հրաշխառն և մոգական կ'ըլլայ ձորահովտին տեսարանը , տարօրինակ ձևեր ունեցող հողաբարամբք ցցուած , որոց ստորուրը կը վազեն գետոյն փրփրալից և հայելոյ պէս ցլացիկ ջուրք՝ պայծառագեղ արեգական մը ձառագայթից տակ : Նոյն միջոցին հին աւանն Կիրուտի յանդիման կ'երևի աչաց իւր բոլոր վայրենի գեղեցկութեամբ . ցաւելով վերջին ակնարկ մը կը ձգենք , ու աչքէ կը կորսնցընենք , հասնելով ընդարձակ հրաբխային սահարարթ մը , զոր թափառական Տատր արշաւաստոյր կը զրաւին :

Շարաշարեղի

## ՄԵԾԻՆ ՆԵՐՍԻՍԻ ԸՆԾԱՅՈՒԱԾ

ՄԱՐԳԱՐԷՈՒԹԵԱՆ ՅՈՅՆ ԲՆԱԳԻՐՆ ԵՒ ԱՆՈՐ

ՎԵՐԱՅ ԵՂԱԾ ԿՐԿԻՆ ԽՄԲԱԳՐՈՒԹԻԿԵՔ



**ՄԱՆՈԹ** է բանասիրաց յամին 1853 ի վենետիկ հրատարակուած « Պատմաշրիւն Սրբոյն Ներսիսի Պարբէի Հայոց հայրապետի , որ « Հայկ. Սոփերաց » Չ . հատորը կը կազմէ : Տարակոյս չկայ բնաւ , թէ Պատմագրութեանս հեղինակն իրօք եղած ըլլայ Մեսրոբ Երեց՝ ի Ժ . դարու . բայց այն անծանօթ աղբերքը , զորս ի վար արկած է նա , — բաց ի փ . բուզանդացւոյ , — ինչպէս նաև ինչ ինչ եկամուտ հաստուածներ , որք հաւածօրէն յետոյ ժամանակաւ սպրդած են անդ , առանց տարակուսի չէին անցնիր քննասիրի մի տեսութենէն : Այս աղբերաց կարգէն են բոլոր այն մարգարէագուշակ բանից և տեսլեանց հաստուածներն , որոնք Մեծին Ներսիսի բերանը դրուած են՝ ի քաղել հոգւոյն՝ դաւաճանող թիւնից անօրէն թագաւորին Պապայ , և որոնք 87—104 էջերու մէջ կը լիտան : Տեղեացս անհարազատ ըլլալուն յայտնի ապացոյց են՝ աւելի օտարին՝ քան Հայոց պատմութեան և ազգին վերաբերեալ այն պատմական և աշխարհագրական ակնարկութիւններն , որք հակա-ժամանակագրական և անյարմար կերպով մտցուած են Ս . Ներսիսի առ Հայս և ի մասնաւորի առ Արշակունիս ուղղեալ խօսից և գուշակութեանց հետ , և աչքի դարնող կերպով կարծես թէ ընդհատած են զանոնք իրարմէ :

Վերջերս իմ սիրելի բարեկամ գրչագրերէն մին , այն է « Ի . Սյակեփոթիկն »<sup>1</sup>

1. Գրչագիրս կը պատկանէր ժամանակաւ Տէր Կարապետի Խզլարցւոյ , զոր ընծայեց չ . Մինաս վարդապետին մերց Բժշկեան : Առաջին մասն , — յորում կը պարունակի յիշեալ գրութիւնն՝ Ագաթրօնի գուշակութեան հետ , — է նորա .